Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՈՒՄ

«ԱՅՍՕՐ ՏՈՆ Է Ս. ԾՆՆԴՅԱՆ»

Դեկտեմբերի 26-ին Էջմածնի մշակույթի տան դահլիճը լեփ-լեցուն էր: Մանուկների ներկայությունն ու մասնակցությունը հանդիսավոր տեսք էին տվել դահլիճին, որը ողողվել էր լույսերով ու մանկական անմեղ ուրախությամբ:

Այս տարվա Ս. Ծննդյան ավետիսը հնչեց Էջմածնի վեց կիրակնօրյա վարժարանների տաների շուրթերից.

«Փառք ի բարձունս Աստուծոյ,

Երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Բեմահարթակում խմբվել էին *«Ս. Մարիամ Աստվածածին»*, *«Ս. Մեսրոպ Մաշտոց»*, *«Ս. Գրիգոր Լուսավորիչ»*, *«Ս. Ներսես Շնորհալի»*, *«Սրբոց Հռիփսիմյանց»*, *«Սրբոց Հրեշտակապետաց»* կիրակնօրյա վարժարանների երգչախմբերը, իսկ դահլիճում նստած տաները ու նրանց ծնողները սրտատրոփ սպասում էին սիրելի Վեհափառ Հայրապետին:

Եվ ահա, սկսվեց Ամանորի տոնական հանդեսը, որը կազմակերպել էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ՔԴՔԿ-ի մշակույթի բաժինը, *«Աղբյուր»* հեռուստատեսային մանկապատանեկան ստեղծագործական խումբը և *«Առաւօտ լուսոյ»* հաղորդաշարը:

Տերունական աղոթքի երգեցողության հմայքը գերեց ողջ դահլիճը, լռեցրեց, տարավ դեպի երկնային խորանները:

Հայր Զարեհը իր փոքրիկ օգնականների հետ ներկայացնում էր Ջմեռ պապի, Ամանորի ավանդական պատմությունները, որոնք ուղեկցվում էին ամանորյա տոնական երգերով և «Զվարթնոց» մանկական համույթի ելույթով:

Ծրագիրը մշակված էր հմտությամբ, և կատարված հոգևոր անցումով Ամանորը կապվեց Ս. Ծնունդի հետ:

Հրեշտակային ավետիսի ներկայացումից հետո հնչեցին *«Մեծացուսցեն»*, *«Լուռ գիշերը»*, ապա *«Խորհուրդ մեծը»*: Բոլորի դեմքերին զգացվում էր պահի խորհրդավորությունը: Օգտագործելով ստիպը՝ հոգևոր հայրը բեմից ուսուցանում էր, որ Բեթղեհեմի Մանուկը մեզ երջանկություն շնորհեց, հույս տվեց, օգնեց չհուսահատվելու: Եվ հոգևոր վարժարանի մանկան շուրթերից հնչում էր *«Բարի լուրը»*.

Այսօր տոն է ցնծության, զի ծնաւ Հիսուս Մեսիան,
Բարի լուր է, բարի լուր է, բարի լուր:

Մանուկների երեշտակային ավետիսները ներկաների կողմից ընդունվում էին խանդաղատանքով ու ծափողջույններով:

Բարի լուրը թևածեց ու թափանցեց սրտերից ներս և դարձավ *«Ս. Ծննդյան տոն»*, տոն վերածնության, հույսի ու նորոգման աղբյուր.

Այսօր տօն է Ս. Ծննդեան,
Տեառն մերոյ եւ յայտնութեան,
Այսօր Արեւն անմահութեան
Երեւեցաւ ի մէջ մարդկան:
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Նմա փառք յաւիտեան. Ամէն:

Պարզ ու զգալի էր և ուրախալի, որ նման հանդիսով ու երգով, խոսքով ու շարականով սեր էր քարոզվում, սեր, որ աշխարհին բերեց մոգերի տեսած Աստղը, հովիվների նկատած Լույսը, որը մեղավոր աշխարհը մոտեցրեց Աստծուն:

«Միրեցեք իրար, քանզի սերն Աստծուց է»:

Մանուկների շուրթերից հնչող շարականը ստիպում է մտորել ու խորհել Բեթղեհեմյան անմարելի Աստղի մասին:

Համերգ-հանդիսությունն ավարտվում է *«Հայաստան»* երգով: Երգում են մոմերը ձեռքերին՝ իրենք էլ դառնալով վերածնված Հայաստանի՝ մոմի պես առկայծող շողեր:

Համերգի ավարտին մանուկներին ողջունեց, պատգամներ հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետը՝ այդ օրը համարելով ոչ թե ծմռան, այլ գարնան տոն:

Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունն ու դրվատանքի խոսքն ուղղեց մանուկներին, ծնողներին և ուսուցիչներին:

Մանուկներին, որոնց համարեց *«օազիս՝ այս անապատացած աշխարհում»*:

Ծնողներին, որոնք *«վկա եղան իրենց երեխաների հոգևոր ծնին»*: Եվ նրանց խորհուրդ տվեց, որ լսած շարականները երգեն նաև տանը՝ նրագալուլցին:

Ուսուցիչներին, միջոցառման պատասխանատուներին, որոնց հորդորեց բազմապատկել սաների հանդեպ ցուցաբերած մաքուր ու անկեղծ սերը:

«Սերն ու զոհողությունը վերադառնում են ուրիշ անունով, որ կոչվում է երջանկություն»,- ամփոփեց Վեհափառ Հայրապետը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ